ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1960—1978 ԹԹ.

ՎԼԱԴԻՊ ՀԱԿՈԲՅԱՆ

Արդի փուլում, ինչպես ամբողջությամբ վերցրած սովետական հասարակության, այնպես էլ նրա բաղադրամասը կազմող գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքի բնորոշ հատկանիշը նրա հարաշարժությունն է։ Ամենից առաջ ուշադրության է արժանի այն փաստը, որ բանվոր դասակարգի և մտավորականության տեսակարար կշռի բարձրացման հաշվին գյուղական, հետևաբար նաև ամբողջ բնակչության մեջ կրճատվում է գյուղացիության բաժինը[1]։ Այդ երևույթը նկատելի է ինչպես ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում, այնպես էլ միութենական բոլոր հանրապետություններում։ Ընդ որում, կոլտնտեսային գյուղացիության կրճատման պրոցեսը մեր հանրապետությունում ավելի արագ է ընթանում, քան ամբողջ երկրում, չնայած ՀՍՍՀ-ում գյուղական բնակչության սեփական վերարտադրության տեմպերն անհամեմատ բարձր են, և ամբողջ բնակչության մեջ գյուղաբնակների բաժնի նվազումն ամենևին չի ուղեկցվում գյուղական բնակչության թվակազմի կրճատմամբ, ինչպես այդ տեղի է ունենում ընդհանուր առմամբ Միության մեջ։ Ավելին, Հայաստանում արդի փուլում ևս գյուղական բնակչությունը շարունակում է աճել։ Այսպես, 1960—1979 թթ. նրա թվաքանակը 907 հազարից հասավ 1038 հազարի կամ աճեց ավելի քան 11%-ով[2]։ Ուստի, եթե ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում միգրացիայի հետևանքով գյուղական բնակչության թվաքանակի նվազման պայմաններում անխուսափելիորեն կրճատվում է նաև կոլտնտեսային գյուղացիությունը (եթե բացառենք անգամ կոլտնտեսությունների սովխոզացումը, որի հետևանքով գյուղացիությունը զանգվածորեն համալրում է բանվոր դասակարգի

---

[1] Վիճակագրական տեղեկագրերում գյուղացիության դասակարգի մեջ կոլտնտեսային մտավորականության մտցնելը չփոթություն է առաջացնում զուտ գյուղացիության (որպես դասակարգի) կազմում կատարված քանակական և որակական փոփոխությունները վերլուծելիս։ Ուստի, փաստերի աղավաղումից խուսափելու նպատակով հարմար գտանք նեղ կտրվածքով (կոլտնտեսային աշխատանքներին մասնակցող գյուղացիների տարեկան միջին թիվը) կոլտնտեսային գյուղացիության կազմի փոփոխություններին անդրադառնալիս օգտվել պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում նշված կոլտնտեսային աշխատանքներում ընդգրկված կոլտնտեսականների թվաքանակի մասին եղած տվյալներից։ դրանից հանելով կոլտնտեսային մտավորականությանը։ Նույն կերպ էլ վարվում ենք կոլտնտեսային ամբողջ գյուղացիության (աշխատող գյուղացիները՝ իրենց ընտանիքի ոչ աշխատունակ անդամներով) կազմն ուսումնասիրելիս՝ գյուղացու (որպես դասակարգի ներկայացուցչի) ընտանիքի անդամների թիվը պայմանականորեն հավասարեցնելով կոլտնտեսային մտավորականի ընտանիքի անդամների թվին։

[2] «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», Ереван, 1978, с. 7; «Правда», 22 IV 1979

ագրարային ջոկատի շարքերը), ապա մեր հանրապետության համար միգրացիան թեև նպաստում է, սակայն կոլտնտեսային գյուղացիության թվակազմի կրճատման որոշիչ գործոն չէ, քանի որ, ինչպես տեսանք, ՀՍՍՀ-ում գյուղական ամբողջ բնակչությունը շարունակում է աճել։

1960—70-ական թվականներին մեր հանրապետության կոլտնտեսային գյուղացիության թվակազմի նվազումն ամենից առաջ բացատրվում է մեծ թվով կոլտնտեսություններ սովխոզների վերակազմելով։ Դրա շնորհիվ կոլտնտեսային գյուղացին արդեն համաժողովրդական սեփականության պայմաններում մեխանիկորեն վերափոխվում է բանվորի։ Ի դեպ, սովխոզացման պրոցեսը Հայաստանում ավելի արագ է ընթանում, քան Միության մեջ ամբողջությամբ վերցրած։ Այսպես, 1960—1977 թթ. Հայկական ՍՍՀ-ում կոլտնտեսությունների թիվը 760-ից իջավ 317-ի կամ կրճատվեց 2,4 անգամ, իսկ ՍՍՀՄ-ում 44,9 հազարից հասավ 27,1 հազարի՝ նվազելով միայն 1,7 անգամ[3]։

Այժմ կոնկրետ փաստերով անդրադառնանք հանրապետության կոլտնտեսային գյուղացիության կազմում կատարված քանակական փոփոխություններին։

1960—1977 թթ. ՀՍՍՀ-ի կոլտնտեսային գյուղացիության թվաքանակը (կոլտնտեսային աշխատանքներում ընդգրկված գյուղացիները՝ իրենց ընտանիքի անդամներով) 722 հազարից իջավ 384 հազարի կամ կրճատվեց շուրջ 47%-ով[4]։ Նույն ժամանակաշրջանում կոլտնտեսային աշխատանքներում զբաղված գյուղացիության տարեկան միջին թվաքանակը նվազեց ավելի քան 2 անգամ՝ 161,5 հազարից իջնելով 79 հազարի[5]։

Ինչպես կարելի է նկատել, կոլտնտեսային աշխատանքներում զբաղված գյուղացիության թվաքանակն ավելի արագ նվազեց, քան ամբողջ գյուղացիներինը (լայն կտրվածքով)։ Դրա հետևանքով իջավ կոլտնտեսային արտադրության մեջ զբաղված աշխատողների տեսակարար կշիռը՝ կոլտնտեսության անդամ գյուղացիների կազմում։ Եթե 1960 թ. կոլտնտեսային աշխատանքներում ընդգրկված գյուղացիների բաժինը կազմում էր կոլտնտեսության անդամ գյուղացիների (անկախ կոլտնտեսային աշխատանքներում մասնակցություն ունենալուց) 44%-ը, ապա 1977 թ.՝ միայն 38%-ը[6]։

Չնայած ցուցաբերող կրճատման նշաններին, Սովետական Հայաստանի կոլտնտեսային արտադրության մեջ գյուղացիների զբաղվածության տոկոսը բարձր է Միության միջինից։ Եթե հաշվի առնենք մեր հանրապետության ծայրաստիճան սակավահողությունը, ապա թվում է, թե պատկերը պետք է

---

3 «Народное хозяйство СССР в 1960 году», М., 1961, с. 492; «Народное хозяйство СССР в 1978 году». М., 1979, с. 261; «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с 107.

4 ՀՍՍՀ ԿՎՎ գյուղատնտեսության վիճակագրության բաժին, կոլտնտեսությունների 1960 և 1977 թթ. տարեկան հաշվետվությունների ամփոփագրեր, էջ 1—3.

5 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с. 107. Գյուղացիության թվաքանակը ստացել ենք գրաղված ամբողջ կոլտնտեսականների կազմից կոլտնտեսային մտավորականներ հանելու միջոցով։

6 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с. 107, 118 ՀՍՍՀ ԿՎՎ գյուղատնտեսության վիճակագրության բաժին, կոլտնտեսությունների 1960 և 1977 թթ. տարեկան հաշվետվությունների ամփոփագրեր։ Հաշվարկները մերն են։

հակառակը լիներ։ Սակայն դա այդպես չէ։ Ցանկացած արտադրության մեջ գրաղվածության աստիճանը որոշվում է ոչ թե աշխատանքի առարկայի չափով (օրինակ, գյուղատնտեսության մեջ՝ հողատարածությամբ), այլ արտադրության սպեցիֆիկ առանձնահատկություններով և միջոցների կատարելագործվածության մակարդակով։ Կոնկրետ, Հայկական ՍՍՀ-ի լեռնային դիրքի, գյուղատնտեսության ճյուղային բաղադրանության և դրանից մեքենայացման համեմատաբար ցածր աստիճանի հետևանքով արտադրության շատ ճյուղեր մնում են խիստ աշխատատար և հատկապես գյուղատնտեսական աշխատանքների լարված պահերին պահանջում են մեծ չափով բանվորական ուժ, հետևաբար և գյուղացիության գրաղվածության անհամեմատ բարձր մակարդակ։

Միաժամանակ, տրամաբանական է, որ գյուղատնտեսական արտադրության աշխատատար բնույթն իր հերթին հղի է բանվորական ուժի առաջացման մեծ հնարավորություններով, որը գիտատեխնիկական առաջադիմության ազդեցության ներքո վեր է ածվում արդեն «ավելցուկ» ուժի։ Դա անխուսափելի է դարձնում գյուղատնտեսությունից բնակչության մի մասի տեղափոխումն արտադրության այլ ճյուղեր։ Այդ է պատճառը, որ կոլտնտեսային աշխատանքներում գրաղված գյուղացիության տեսակարար կշռի նվազումն ուղեկցվում է ինչպես դեպի քաղաք գյուղացիների արտահոսքի ուժեղացումով, այնպես էլ կոլտնտեսային գյուղում ապրող, բայց գյուղատնտեսական արտադրության մեջ չգտնվող աշխատողների բաժնի աճով։ Օրինակ, եթե արդյունաբերության մեջ, տրանսպորտում, միջնտեսային միավորումներում և այլ ճյուղերում աշխատանքի անցած, բայց կոլտնտեսության անդամ աշխատողները 1960 թ. կազմում էին կոլտնտեսությունների աշխատունակ բնակչության 13%-ը, ապա 1977 թ.՝ 20%-ը[7]։

Ընդհանրացնելով գյուղացիության կազմում տեղի ունեցող քանակական փոփոխությունները, հարկ է նշել, որ չնայած նրա թվաքանակի կրճատմանը, կոլտնտեսային գյուղացիությունը եղել և մնում է մեր երկրի հիմնական հասարակական խմբերից մեկը։ Որպես այդպիսին, նա բանվոր դասակարգի և մտավորականության նման անընդհատ համալրում է իր շարքերը։ Զարգացած սոցիալիզմի շեմին այդպիսի կարևոր համալրում դարձավ 1958 թ. մեքենատրակտորային կայանների (ՄՏԿ) վերակառուցման հետևանքով բանվոր դասակարգի մի ստվար ջոկատի անդամագրվելը կոլտնտեսային գյուղացիությանը։ Գյուղացիության կազմը լրացնում են նաև գյուղ վերադարձող նախկին հմտագյուղացիների մի մասը, պրոֆտեխնիկական և տեխնիկական կրթություն ստացած որոշ երիտասարդներ։ Սակայն համալրման վերջին աղբյուրներն առատ չեն և գերազանցապես դիպվածային բնույթ ունեն։ Այդ իսկ պատճառով, ի տարբերություն մյուս հասարակական խմբերի, կոլտնտեսային գյուղացիության համալրումն ընթանում է հիմնականում իր ներքին վերարտադրության հաշվին։ Սակայն համալրման գրեթե այդ եղակի աղբյուրը չի ապահովում գյուղացիության թվական աճ (ինչպես դա տեղի է ունենում համեմատաբար ցածր վերարտադրության տեմպեր ունեցող բանվոր դասակարգի և մտավորականության կազմում), քանի որ

---

[7] Տե՛ս ՀՍՍՀ ԿՎՀ ընթացիկ արխիվի նյութերը։

այդ դասակարգի թվակազմը փոքրանում է գլխավորապես մեծ թվով կոլտնտեսություններ սովխոզների վերակազմելու հետևանքով։

Կոլտնտեսային գյուղացիության թվաքանակի նվազմանը զուգընթաց նրա կազմում կատարվում են նաև որակական փոփոխություններ։ Գյուղի ինդուստրացումը, սպասարկման, կուլտուր-կենցաղային ոլորտների ընդլայնումը, բնակչության կրթական մակարդակի աճը և նյութական բարեկեցության բարձրացումն ակտիվ ներգործություն են ունենում կոլտնտեսային գյուղացիության սոցիալական կառուցվածքի վրա՝ առաջ բերելով բարձրորակ աշխատանք կատարող գյուղացիների տեսակարար կշռի աճ։ Եվ եթե սոցիալիստական շինարարության նախորդ փուլերում կոլտնտեսային գյուղացիության ճնշող մեծամասնությունը կատարում էր պարզունակ աշխատանքային գործիքների վրա հենված «ունիվերսալ» աշխատանք, և կոլտնտեսությունների տարեկան հաշվետվությունների ձևերով հնարավոր է առանձնացնել միայն աշխատողների երկու խմբեր՝ արտադրության ղեկավարներին ու կազմակերպիչներին (որոնք սոցիալական պատկանելությամբ գյուղացիներ չեն) և «մնացած» կոլտնտեսականներին, ապա այժմ կոլտնտեսային գյուղացիությունը ներկայանում է բանվոր դասակարգի ագրարային ջոկատին բնորոշ հիմնական ներդասակարգային խավերով և խմբերով։

Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում, «Գյուղատնտեսության արտադրության ինդուստրացման համեմատ խոր փոփոխություններ են տեղի ունենում կոլտնտեսային գյուղացիության կյանքում։ Նրա աշխատանքն աստիճանաբար մերձենում է բանվորի աշխատանքին։ Գյուղում ավելի ու ավելի են շատանում մեխանիզատորները, նորագույն տեխնիկայի հետ կապված մյուս աշխատողները»[9]։

Ժամանակակից կոլտնտեսային գյուղացիության սոցիալական և մասնագիտական շերտավորման ընդհանրության վրա ամենաակտիվ ներգործություն ունեցավ ՄՏԿ-ների վերակառուցման և նորոգման տեխնիկական կայանների (ՆՏԿ) ստեղծման վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենումի որոշումը։ Ինչպես նշվեց պլենումում, ՄՏԿ-ները դարձել էին ավելորդ օղակ և փաստորեն վեր էին ածվել վարձակալների։ Ուստի, «ելնելով երկրի սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքի,

---

[9] Հարկ է նշել, որ գրականության մեջ ինչպես բարձրորակ, այնպես էլ միջին որակավորման և ցածրորակ աշխատանք կատարողների սոցիալական միավորները սովորաբար անվանում են ոչ թե ներդասակարգային խավեր, այլ խմբեր։ Սակայն դրանք տարբեր հասկացություններ են, ընդգրկման տարբեր սահմաններով, Իրավացի է Վ. Սեմյոնովը, երբ սոցիալական խմբերը տեղադրում է ներդասակարգային խավերի կազմում, դտնելով, որ եթե դասակարգը սոցիալական բաժանման բարձր աստիճանն է, խավը միջին, ապա խումբը՝ նախնական, ստորին մակարդակն է (В. С. Семенов. Диалектика развития социальной структуры советского общества. М., 1977, с. 62)։ Այսինքն, դասակարգի մաս կազմող խավի և սոցիալական խմբի տարբերությունն այն են, որ երկրորդը ներդասակարգային բաժանման հետագա արդյունք է։ Այդ իսկ պատճառով նա ուղղակիորեն մտնում է ոչ թե դասակարգի, այլ ներդասակարգային խավի մեջ։ Ասել է՝ թե բարձրորակ աշխատանքում զբաղված աշխատողների սոցիալական կատեգորիան ոչ թե խումբ է, այլ ներդասակարգային խավ, իսկ նրա կազմում ընդգրկված սոցիալական միավորները (մեխանիզատորները և այլն) խմբեր կամ ներխավային ջոկատներ են։

[9] «Սովետական Հայաստան», 24. II. 1981։

կոլտնտեսային կարգի զարգացման շահերից, նպատակահարմար է փոխել կոլտնտեսությունների արտադրատեխնիկական սպասարկման գոյություն ունեցող կարգը և աստիճանաբար վերակառուցել ՄՏ կայանները, որոնք... արդեն շատ բանով սպառել են իրենց ֆունկցիաները»[10]:

Հիմք ընդունելով այդ որոշումը, ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1958 թ. ապրիլի 25-ին որոշում ընդունեցին հանրապետությունում ՄՏԿ-ները ՆՏԿ-ների վերակառուցելու մասին։ Այդ որոշմամբ Հայաստանում եղած 52 ՄՏԿ-ները վերակազմվեցին և դրանց բաղադրի վրա կազմակերպվեցին 28 ՆՏԿ-ներ, իսկ ՄՏԿ-ների տեխնիկան արտոնյալ գներով վաճառվեց կոլտնտեսություններին։ Մինչև 1958 թ. նոյեմբերը հանրապետության կոլտնտեսությունները գնեցին 63,9 մլն ռուբլու (գների հին մասշտաբով) գյուղատնտեսական մեքենաներ[11], միաժամանակ, կոլտնտեսային գյուղացիությունը համալրվեց ՄՏԿ-ների մեխանիզատորներով. կարճ ժամանակաընթացքում կոլտնտեսություններում մշտական աշխատանքի տեղափոխվեցին ավելի քան 4.000 տրակտորիստներ, կոմբայնավարներ և գյուղատնտեսական այլ մասնագետներ[12], որոնք մինչ այդ ներկայացնում էին բանվոր դասակարգի ագրարային ջոկատը։ Սոցիալ-քաղաքական կարևոր նշանակություն ունեցող այդ միջոցառման շնորհիվ կոլտնտեսային գյուղացիության կազմում հանդես եկավ որակապես նոր սոցիալական խումբ։

Մեխանիզատորների ամրացումը կոլտնտեսություններին, ինչպես և դրան հաջորդած կոլտնտեսային արտադրության հետագա տեխնիկական վերազինումը, էլեկտրիֆիկացիան և այլ միջոցառումներ որակական նոր տեղաշարժեր առաջացրին կոլտնտեսային գյուղացիության սոցիալական կառուցվածքում։ Գյուղացիությունը, որը մինչ այդ սոցիալ-կառուցվածքային տեսակետից գրեթե միատարր էր, դարձավ սոցիալական շերտավորված հանրություն։ Նրա կազմում երևան եկան բոլորովին նոր մասնագիտական խմբեր՝ ապարատավարներ, օպերատորներ, ավտոմատավարներ և այլն։ Միաժամանակ տարբեր խավերի և խմբերի միջև առաջացան սահմանային սոցիալական և մասնագիտական շերտեր։ Այլ կերպ ասած, զարգացած սոցիալիզմի պայմաններում կոլտնտեսային գյուղացիության կազմում դիտվում են նույն օրինաչափությունները, ինչ ագրարային բանվորների սոցիալական կառուցվածքում։ Կոլտնտեսություններում (ինչպես և սովխոզներում) գլխավոր և հեռանկարային սոցիալական միավորը դարձավ բարձր որակավորում ունեցող աշխատողների խավը (մեխանիզատորներ, խառատներ, ապարատավարներ և այլն), որն աշխատանքի բնույթով և բովանդակությամբ մերձենում է բանվոր դասակարգի բարձրորակ խմբերին։

Ներդասակարգային այդ խավի միջուկը մեխանիզատորների խումբն է, որի քանակական և որակական կազմը ենթարկվեց որոշակի փոփոխությունների։ Ամենից առաջ բարձրացավ նրա բաժինը գյուղացիության կազմում։ Այսպես, 1960—1977 թթ. կոլտնտեսային աշխատանքներում զբաղված գյուղացիների տարեկան միջին թվաքանակում տրակտորիստ-մեքենավարների, տրակտորիստ-կոմբայնավարների և վարորդների տեսակարար կշիռը

---

10 «ՍՄԿԿ 19 1958 թ. փետրվարյան պլենումի նյութերը», Երևան, 1958, էջ 10։

11 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 135, թ. 85։

12 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1959, № 2, էջ 65։

5,4%-ից հասավ շուրջ 9-ի՝ ընդհուպ մոտենալով սովխոզների մեխանիզատորների համապատասխան ցուցանիշին[13]։ Եվ եթե 1960 թ. միջին հաշվով մեկ կոլտնտեսությունն ուներ 6,3 տրակտորիստ-մեքենավար և տրակտորիստ-կոմբայնավար ու 5 վարորդ, ապա 1977 թ. համապատասխանորեն 11,7 և 10,7[14]։

Սակայն, չնայած առաջընթացին, հանրապետության գյուղացիության (ինչպես և ագրարային բանվորների) կազմում մեխանիզատորների բաժինը զգալի ցածր էր միութենական միջինից։ Բավական է նշել, որ 1977 թ. ամբողջությամբ վերցրած այն չհասավ ՍՍՀՄ-ի անգամ 1965 թ. մակարդակին։ Միաժամանակ մեխանիզատորների բաժնի շոշափելի մեծացումը չուղեկցվեց նրանց բացարձակ աճով։ Ավելին, հիշյալ ժամանակահատվածում Հայաստանի կոլտնտեսային մեխանիզատորների թվաքանակը 8,7 հազարից իջավ մինչև 7,1 հազարի կամ կրճատվեց 18,4%-ով[15], մինչդեռ ամբողջ երկրում նկատվեց հակառակ օրինաչափությունը։

ՀՍՍՀ-ի կոլտնտեսային (նաև սովխոզային) մեխանիզատորների համեմատաբար ցածր տեսակարար կշիռը բացատրվում է հանրապետության գյուղատնտեսական մասնագիտացմամբ հատուկ մշակվող կուլտուրաների մեքենայացման հնարավորությունների սահմանափակությամբ, ռելիեֆային կտրտվածությամբ, կադրերի հոսունությամբ և այլն։ Բնականաբար, նշված հանգամանքները կարող են միայն դանդաղեցնել և ոչ թե կասեցնել կամ կրճատել մեխանիզատորների թվական աճը։ Բայց ինչպես տեսանք վերևում, Հայկական ՍՍՀ-ի կոլտնտեսություններում արձանագրվեց հենց վերջին փաստը։ Դա բացատրվում է ամբողջ Միության համեմատությամբ Հայաստանում կոլտնտեսությունները սովխոզների վերածվելու ինտենսիվությամբ և որպես դրա արդյունք՝ կոլտնտեսային գյուղացիության առավել արագ տեմպերով նվազմամբ։ Այսպես, հանրապետության կոլտնտեսություններում զբաղված գյուղացիության տարեկան միջին թվաքանակը 1960—1977 թթ. կրճատվեց ավելի քան 50%-ով՝ ՍՍՀՄ-ի 24%-ի դիմաց[16]։ Ինչպես կարելի է նկատել, ՀՍՍՀ-ի կոլտնտեսային գյուղացիության թվաքանակն ավելի արագ նվազեց, քան նրա կազմում աճեց մեխանիզատորների տեսակարար կշիռը։ Դրանով ինքնին հասկանալի է դառնում կոլտնտեսային մեխանիզատորների թվաքանակի կրճատման երևույթը։ Ի դեպ, տարբեր մասնագիտությունների տեր մեխանիզատորների թվակազմը նույն համամասնությամբ չնվազեց։ Եթե տրակտորիստ-կոմբայնավարների և տրակտորիստ-մեքենավարների բացարձակ թվաքանակը 1960—1977 թթ. ամբողջ մեխանիզատորների նշված 18,4%-ի դիմաց կրճատվեց 24,5%-ով, ապա վարորդներինը նվազեց աննշան չափով, իսկ 1978 թ. անգամ հասավ 1960 թ. մակարդակին[17]։

---

13 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с. 107, 118, 120 (հաշվարկները մերն են).

14 Նույն տեղում, էջ 107, 120։

15 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с. 120.

16 «Народное хозяйство СССР в 1960 году», с. 522; «Народное хозяйство СССР в 1978 году», с. 261; «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с. 107, 118 (հաշվարկները մերն են).

17 «Народное хозяйство Армянской ССР в 1977 году», с. 120.

Նկատենք նաև, որ կոլտնտեսային տրակտորիստների թվակազմի ակնհայտ կրճատումն ուղեկցվում է կոլտնտեսություններում տրակտորների թվի շոշափելի ավելացմամբ։ Օրինակ, նշված ժամանակաշրջանում ՀՍՍՀ-ի կոլտնտեսություններում տրակտորիստների (ներառյալ տրակտորիստ-մեքենավարները և տրակտորիստ-կոմբայնավարները) թվաքանակը նվազեց 1,2 հազարով, իսկ տրակտորների թիվն ավելացավ ավելի քան 0,7 հազարով[18]։ Տեխնիկայի և կադրերի թվաքանակի այս հակադարձ փոփոխությունների հետևանքով գյուղում գնալով զգացվում է տրակտորիստների խիստ կարիք։ Այսօր էտալոնային տրակտորին չի հասնում անգամ մեկ տրակտորիստ։ Վիճակը գրեթե նույնն է ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում։ Նման պայմաններում խոսք լինել չի կարող տեխնիկայի ռացիոնալ օգտագործման և երկհերթ աշխատանքների կազմակերպման մասին։

Տրակտորիստ-մեքենավարների և տրակտորիստ-կոմբայնավարների թվաքանակի ինտենսիվ կրճատումը բացատրվում է հետևյալ պատճառներով։ Նախ, այդ մասնագետների աշխատանքային ոչ նորմալ պայմանների (աշխատանքի սեզոնային բնույթը, սանիտարահիգիենիկ պայմանները և այլն) հետևանքով նրանց մոտ բավական ուժեղ է հոսունությունը։ Երկրորդ, մասնագիտության բերումով նրանք առավել հաջողությամբ են կարողանում զուգակցել հարակից մասնագիտություններ, որի շնորհիվ տեղի է ունենում տարբեր մասնագիտությունների համատեղում։ Օրինակ, կոմբայնավարի մասնագիտությունը տրակտորիստի կողմից յուրացվելու շնորհիվ կտրուկ կրճատվեց կոմբայնավարների բանակը։ Ինչ վերաբերվում է վարորդների բանակական կայունությանը, ապա դա բացատրվում է ինչպես նրանց աշխատանքային համեմատաբար բավարար պայմաններով, այնպես էլ աշխատանքի ոչ սեզոնային բնույթով և բարձր աշխատավարձով։

Քանակական փոփոխություններին զուգահեռ մեխանիզատորների կազմում կատարվել են նաև որակական մեծ տեղաշարժեր։ Ամենից առաջ ընդլայնվել են մեխանիզատորական մասնագիտությունների շրջանակները։ Բացի տրակտորիստներից, վարորդներից ու կոմբայնավարներից (որոնք գյուղում գործում էին նաև սոցիալիստական շինարարության նախորդ փուլերում) արդի ժամանակաշրջանում գիտատեխնիկական նվաճումների ազդեցության տակ երևան են եկել մեխանիզատոր-անասնապահների, ոռոգման համակարգերի մեխանիզատորների, թռչնաֆաբրիկաների կառավարման կետերի մեքենավարների և այլ մասնագիտական ենթախմբեր։ Միաժամանակ այսօրվա տրակտորիստը կամ վարորդը իր նախորդին գերազանցում է նաև որակավորման մակարդակով։ Եթե ոչ հեռու անցյալում նշված մասնագետների մեծ մասն ուներ համեմատաբար ցածր կարգի որակավորում, ապա 1977 թ. ապրիլի 1-ի դրությամբ հանրապետության կոլտնտեսություններում տրակտորիստ-մեքենավարների և տրակտորիստ-կոմբայնավարների շուրջ 65 և վարորդների 59%-ը ուներ 1-ին և 2-րդ կարգի որակավորում[19]։ Առանձին շրջաններում այդ ցուցանիշներն ավելի բարձր են։ Օրինակ, նույն թվականի տվյալներով, Մարտունու շրջանի կոլտնտեսություններում տրակտորիստ-

---

18 Նույն տեղում, էջ 108, 120։

19 Տե՛ս ՀՍՍՀ ԿՎՎ բնթացիկ արխիվի նյութերը։

կոմբայնավարների և տրակտորիստ-մեքենավարների 81, իսկ Ամասիայի և Ախուրյանի շրջաններում՝ համապատասխանաբար 87 և 88%-ը ունեին 1-ին և 2-րդ կարգի որակավորում[20]։

Մեխանիզատորների որակավորման մակարդակի որոշման գործոններից մեկն էլ տվյալ մասնագիտությամբ աշխատելու ստաժն է։ ՀՍՍՀ ԿՎՎ տվյալներով՝ 1977 թ. ապրիլի 1-ի դրությամբ կոլտնտեսությունների տրակտորիստ-մեքենավարների և տրակտորիստ-կոմբայնավարների ավելի քան 70, իսկ վարորդների շուրջ 65 %-ը տվյալ տնտեսության մեջ իրենց մասնագիտությամբ աշխատում էին 5 տարուց ոչ պակաս[21]։ Ի դեպ, այդ ցուցանիշներով կոլտնտեսային մեխանիզատորները գերազանցում են սովխոզների համապատասխան մասնագետներին։

Ինչպես նշվեց, բարձր որակավորում ունեցող գյուղացիության կազմում երևան են եկել նաև մասնագիտական այլ խմբեր՝ ապարատավարներ, օպերատորներ, էլեկտրիկներ և այլն, որոնք, ինչ խոսք, դեռևս որակ չեն կազմում, սակայն գիտատեխնիկական նվաճումների հետագա արմատավորման շնորհիվ նրանց տեսակարար կշիռը, անշուշտ, կբարձրանա։

Միաժամանակ հարկ է նշել, որ դեռևս բարձր տեսակարար կշիռ ունեն ցածր որակավորում ունեցող գյուղացիները։ Ճիշտ է, գյուղացիության կազմում այդօրինակ աշխատանք կատարողների թվաքանակի համեմատաբար արագ նվազման հետևանքով կրճատվեց վերջիններիս բաժինը և նկատվեց կոլտնտեսային գյուղացիության ու ագրարային բանվորների որակավորման մակարդակների համահարթման միտում, սակայն ցածր որակավորում ունեցող կամ որակավորում չունեցող աշխատողների տեսակարար կշիռը ՀՍՍՀ կոլտնտեսություններում (նաև սովխոզներում) բարձր է, քան ամբողջությամբ վերցրած երկրում։ Դրա պատճառը դարձյալ պետք է բացատրել մեր հանրապետության ռելիեֆային կտրտվածությամբ, գյուղատնտեսության աշխատատար ճյուղերի բազմազանությամբ և դրանց մեքենայացման ներկայիս համեմատաբար ցածր աստիճանով, որոնք դանդաղեցնում են գյուղացիության (ինչպես և ագրարային բանվորների) կազմում ցածր որակավորում ունեցող աշխատողների տեսակարար կշռի կրճատման ընթացքը։ Բավական է նշել, որ 1960—1977 թթ. գյուղացիության կազմում այդ կատեգորիայի աշխատողների բաժինը նվազեց միայն 9 %-ով՝ 78-ից իջնելով 69 %-ի[22]։ Պատահական չէ, որ բարձրորակ և միջին որակավորում ունեցողների բաժնի աճը տրամաբանորեն ընթացավ դանդաղ՝ համապատասխանաբար 5 և 4%-ով[23], այն դեպքում, երբ հանրապետությունում բավական արագ են աճում գյուղատնտեսական բանվորական կադրերի պատրաստման տեմպերը։ Միայն 1971—1975 թթ. ՀՍՍՀ գյուղական պրոֆտեխնիկական ուսումնարանների թիվը 5-ից հասավ 12-ի, իսկ դրանցում սովորողների թվակազմը աճեց ավելի քան 2 անգամ[24]։ Այդ ընթացքում հանրապետությունում պատրաստվեցին

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 ՀՍՍՀ ԿՎՎ աշխատանքի և աշխատավարձի վիճակագրության բաժին, 1976 թ. գիկուցագրական և վերլուծական գրառումներ, էջ 3—4։

24 Նույն տեղում։

շուրջ 30 հազար գյուղատնտեսական բանվորական կադրեր[25]։ Նկատենք, որ մեծ թվով կադրեր են պատրաստվում նաև գյուղական հանրակրթական միջնակարգ դպրոցներում, որտեղ 9—10-րդ դասարանների աշակերտները, բացի մեխանիզատորական մասնագիտություններից, յուրացնում են նաև ագրոտեխնիկայի և անասնապահության հիմունքները։ Գնալով աճում է մասնագիտական վկայական ստացած շրջանավարտների թիվը, որոնց մոտ մեծանում է և գյուղատնտեսության մեջ աշխատելու անցնելու ձգտումը։ Այսպես, օրինակ, եթե 1971 թ. Թալինի շրջանի դպրոցներում համապատասխան մասնագիտություն ստացած շրջանավարտների շուրջ 16%-ն էր համալրել գյուղատնտեսական աշխատողների շարքերը, ապա 1976 թ.՝ 30%-ը։ Նույն երեւույթը դիտվում է նաև Ախուրյանի, Արթիկի ու Արտաշատի շրջաններում և պայմանավորված է, անշուշտ, այդ վայրերի միջնակարգ դպրոցներում պոլիտեխնիկական ուսուցման հիմունքների լավ դրվածքով։

Գյուղատնտեսական բանվորական կադրերի պատրաստման տեմպերը հատկապես արագացել են վերջին տարիներին։ Այսպես, 1977—1978 թթ. Հայաստանում պատրաստվել են 15,4 հազար այդպիսի կադրեր։ Ընդ որում, 1977 թ. համեմատությամբ 1978 թ. կադրերի պատրաստումն ավելացել է 10,5 %-ով[26]։

Նշված օրինակները վկայում են, որ մեր հանրապետությունում գյուղատնտեսական բանվորական կադրերի պատրաստումը լայն մասշտաբներ ունի։ Սակայն մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ այդ մասշտաբներն ամբողջությամբ չարտացոլվեցին գյուղացիության սոցիալական կառուցվածքում։ Հանրապետության լեռնային առանձնահատկությունները, գյուղատնտեսության աշխատատար ճյուղերի բազմազանությունը և դրանց մեքենայացման հնարավորությունների սահմանափակ լինելը, ինչպես և գյուղատնտեսությունից դեպի ոչ գյուղատնտեսական ճյուղեր երիտասարդ աշխատուժի հոսքն էապես արգելակում են ցածրորակ և որակավորում չունեցող գյուղացիների բաժնի օբյեկտիվ կրճատման ընթացքը։ Դրանում բնավ վերջին դեր չեն խաղում նաև գյուղատնտեսական կադրերի պատրաստման գործում տեղ գտած թերությունները։ Այսպես, գյուղական պրոֆտեխնիկական ուսումնարանները սովորաբար մասնագետներ են պատրաստում սահմանափակ թվով մասնագիտությունների գծով, հաճախ հաշվի չառնելով այդ մասնագիտությունների նկատմամբ առաջարկի և պահանջարկի միջև գոյություն ունեցող համամասնությունները։ Ուսումնարաններում փորձնական-տեխնիկական կարողությունների սահմանափակությամբ և դասավանդողների ու վարպետների մի զգալի մասի կրթական ցածր մակարդակով պայմանավորված՝ ավարտած որոշ կադրեր ունեն անբավարար պատրաստվածություն։ Պակաս թերություն չէ նաև այն, որ այդ հաստատությունների սովորողների համակազմում փոքր թիվ են կազմում աղջիկները, իսկ մեծ թվով երիտասարդներ ուսումնարաններն ավարտելուց հետո մեկնում են զինծառայության և զորացրվելուց հետո նրանց որոշ մասն օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք

---

25 Նույն տեղում։

26 Տե՛ս Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության ընթացիկ արխիվի նյութերը։

27 ՀՍՍՀ ԿՎՀ աշխատանքի և աշխատավարձի վիճակագրության բաժին. 1979 թ զեկուցագրական և վիրտուալական գրառումներ. թ. 3։

հանգամանքների բերումով պարզապես չի ընդգրկվում գյուղատնտեսական արտադրության մեջ և գյուղում դարձյալ դգացվում է որակյալ աշխատուժի կարիք։

Հիմնական դծերով սրանք են Հայկական ՍՍՀ-ի կոլտնտեսային գյուղացիության կազմում կատարված տեղաշարժերը, որոնց ընդհանրացումը հանգեցնում է հետևյալին։ 1. Զարգացած սոցիալիզմի փուլում կոլտնտեսային գյուղացիության թվաքանակը ինտենսիվ շարունակվում է կրճատվել։ Ընդ որում, չնայած հանրապետության գյուղական բնակչության աճին, այդ երևույթն այստեղ ավելի արագ է ընթանում, քան ամբողջ ՍՍՀՄ-ում։ 2. Կոլտնտեսային աշխատանքներում զբաղված գյուղացիների տարեկան միջին թվաքանակն ավելի արագ է կրճատվում, քան ամբողջ գյուղացիությանը (լայն կտրվածքով)։ Դրան զուգընթաց՝ մեծանում է կոլտնտեսության անդամ, բայց գյուղատնտեսական արտադրության մեջ չընդգրկված աշխատողների տեսակարար կշիռը։ 3. Քանակական փոփոխություններին զուգահեռ կոլտնտեսային գյուղացիության կազմում կատարվում են որակական դգալի տեղաշարժեր։ Կոլտնտեսային գյուղացիությունը դուրս է գալիս սոցիալ-կառուցվածքային համասարփակ վիճակից և դառնում սոցիալական շերտավորված հանրություն։ Նրա կազմում գլխավոր և հեռանկարային սոցիալական միավորն արդեն բարձրորակ աշխատանք կատարողների խավն է։ 4. Կրճատվում է ցածրորակ և որակավորում չունեցող գյուղացիների տեսակարար կշիռը։ Սակայն մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ այդ պրոցեսն ընթանում է դանդաղ տեմպերով, որի հետևանքով ներդասակարգային այդ խավի բաժինը հանրապետության գյուղացիության կազմում մնում է բարձր։

СДВИГИ, ПРОИСШЕДШИЕ В СОСТАВЕ КРЕСТЬЯНСТВА АРМЕНИИ В 1960—1978 ГГ.

ВЛАДИК АКОПЯН

Резюме

В период развитого социализма продолжается интенсивное сокращение численности колхозного крестьянства. При этом, несмотря на общий рост сельского населения Армянской ССР, этот процесс здесь протекает более быстрыми темпами, чем в СССР в целом, что главным образом объясняется преобразованием многочисленных колхозов в совхозы. Вместе с тем, в составе колхозного крестьянства Армении главной и перспективной единицей становится слой, выполняющий высококвалифицированные виды труда, и соответственно сокращается удельный вес неквалифицированных крестьян, однако доля последних в составе крестьянства все еще остается значительной.